ԱԶԱՏ ՀԱՄԲԱՐՅԱՆ

Հայ պատմագիտությունը ծանր կորուստ կրեց: Կյանքի 77-րդ տարում վախճանվեց արևմտահայ ազատագրական շարժումների և ագրարային հարաբերությունների պատմության նշանավոր հետազոտող, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ազատ Սարգսի Համբարյանը:

Ա. Համբարյանը ծնվել է 1926 թ. հունիսի 8-ին, Վրաստանի Հանրապետության Նինոծմինդայի (Բոգդանովկա) շրջանի Սաթխա գյուղում: 1942 թ. Ա. Համբարյանը գերազանցությամբ ավարտում է Գյումրիի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը և աշխատանքի ընդունվում նույն ինստիտուտում: 1953 թ. նա ավարտում է ԽՍՀՄ ԳԱ պատմության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի ասպիրանտուրան և նույն թվականին պաշտպանում իր թեկնածուական ատենախոսությունը: Այդ ժամանակաշրջանից մինչև կյանքի վերջը Ա. Համբարյանի գործունեությունը կապվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հետ: 1980 թ. նա ղեկավարում է նոր դարի պատմության բաժինը: 1966 թ. Ա. Համբարյանը հաջողությամբ պաշտպանել է իր դոկտորական ատենախոսությունը:

Լայն ու ընդգրկուն է Ա. Համբարյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը: Նա հիմնավորապես ուսումնասիրեց Արևելյան Հայաստանի տնտեսության պատմությունը, սկզբնաղբյուրների հարուստ նյութերի հիման վրա վեր հանեց Արևելյան Հայաստանի տնտեսական զարգացման ընդհանրություններն ու առանձնահատկությունները: Նա առաջիններից էր, որ ձեռնամուխ եղավ Արևմտյան Հայաստանի պատմության լուսաբանմանը: Արևմտյան Հայաստանի հողային հարաբերություններին նվիրված նրա մենագրությունն արևմտահայ գյուղացիության պատմության հանրագիտարանն է:

Ա. Համբարյանի ուսումնասիրություններում առանձնանում է արևմտահայ ազատագրական շարժումների պատմության հիմնահարցերի լուսաբանումը, որոնց նա նվիրեց մի շարք աշխատություններ: Ա. Համբարյանը քննության առավ ազգային-ազատագրական շարժումների

նկատմամբ հայ հասարակական հոսանքների ու ազգային կուսակցությունների դիրքորոշումը: Նրա ուշադրությունից չեն վրիպել այլ բնագավառները ժողովրդագրությունը, սոցիալական տերմինաբանությունը և ուրիշ հիմնահարցեր:

Ա. Համբարյանը զգալի ներդրում ունի հայ ժողովրդի պատմության ակադեմիական բազմահատորյակի 6-րդ հատորի պատրաստման դործում:

Հայ պատմագիտության մեջ իր ներդրած ավանդի համար Ա. Համբարյանը ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Նշանակալից է Ա. Համբարյանի ներդրումը երիտասարդ պատմաբանների պատրաստման ասպարեզում: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են դոկտորական ու թեկնածուական ատենախոսություններ: Ա. Համբարյանը երկար տարիներ դասախոսական աշխատանք է կատարել հանրապետության բուհերում:

Նշանավոր դիտնականի, անաչառ ու սկզբունքային մարդու կերպարը միշտ վառ կմնա նրա գործընկերների, աշակերտների ու ճանաչողների սրտերում:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ